302

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.

(ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ)

ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՆԴԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ Ի ՆՈՐ ՋՈՒՂԱ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՌԹԻՒ.

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ Ս. ՎԱՆԱՅ
Ի ՆՈՐ ՋՈՒՂԱ

1893

36990

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Թէպէտ մեր համայն սիրելի Ազգին, հանրածանօթ է մեր Վեհափառ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ (Խրիմեան Հայրիկ) նորընտիր Սրբազնագոյն Կաթուղիկոսի պանծալի անունն, սակայն անծանօթ է բազմաց նորա վեհանձնական, նշանաւոր՝ եւ զարմարդիւն կենաց մանրամասնութիւնքն՝ եւ սխրագործութիւնքն, թէ առ Ազգն՝ եւ թէ առ Եկեղեցին. վասնորոյ, առ 'ի ծանօթացուցանել համօրէն Մերազնեայ Ժողովրդոց զայնցանէ ամենեցունց, ուրախութեամբ մեծաւ հրատարակեմք զՆորին Վեհափառութեան պատուական ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆ, (քաղեալ յ«Արաքս» ազգային Հանդիսէ, Ս. Պետրսբուրգայ. 1888), խնդրելով յԱստուծոյ, զի Որ ողորմութեամբն Իւրով շնորհեաց Ազգիս, զայնպիսի արժանաւոր եւ ազգասէր Հայրապետ եւ Տէր, Նոյն եւ՝ պահեսցէ զՆա հաստատուն եւ փառաւոր, 'ի վերայ Առաքելական Ս. ԳԱՀԻՆ իւրոյ, ընդ երկար ամս, 'ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ մերոյ՝ եւ 'ի պարծանս Ազգիս Հայոց:

'Ի ՆՈՐ—ՋՈՒՂԱ 'ի 13 Օգոստոսի, 1893:

36990

ԱՒՕ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
1960
ՆՈՐ - ՋՈՒՂԱ
ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԶՈՒԱՐԹՆՈՑ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ. Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. Տ. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Եթէ այսօր Հայ մարդը արծարծէ իր մտքում այն դարերը, երբ ապրում էին մեր Եկեղեցու սուրբ Հայրապետներն, և մտաբերէ նոցա կենդանի պատկերն ու գործերը, եթէ նա իր Հոգու աչքերին առաջ ներկայացնէ Ս. Սահակ, Մեսրովբ, Ներսէս, ազգիս այդ ամենանուիրական անձերը՝ նա բնազդմամբ կլիշէ ներկայումս մի մեծ անձնաւորութիւն, որ իր բոլոր կեանքով ու գործունէութեամբ հարազատ աշակերտ և հետևող է եղել մեր այն պատկառելի Հայրապետներին և Հայրերին, նա կմտաբերէ Խրիմեան Հայրիկին, որի մէջ մարմնացած է բովանդակ Հայ ժողովրդի գաղափարը, այն ազգային պահապան հրեշտակին, որին տեսնելիս, մեծահռչակ Հայ բանաստեղծին հետ իւրաքանչիւր Հայ պիտի արտասանէ Ս. Աւետարանի խօսքը, թէ «Արդ արձակեա զծառայս քո ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր ժողովրդեան քում Իսրայէլի»։

Եւ ճշմարիտ, ո՞ր Հայը, ծեր թէ մանուկ, այր թէ կին, Հայրիկին յիշելիս, չէ բորբոքվում վառ զգացմունքներով, և սուրբ յիշատակներով. որի Հոգու ու սրտի՞ վերայ չէ ներգործում նա ամենաքաղցր և զօրաւոր կերպով։

Խրիմեան Հայրիկը այսօր Հայ ժողովրդի այն միակ պատկառելի և միանգամայն սիրելի և նորա բոլոր վստահութիւնն ու համակրութիւնը գրաւող անձն է, որ իր երկարամեայ նուիրական անաղարտ անցեալով Հայութեան կենդանի ոգին է ներկայացնում։

Հայրիկ, այս դիւթական անունը, որ մի քանի տասնեակ տարիներէ ի վեր Հայ մարդի ականջին հնչումէ մի առանձին քաղցրութեամբ, Հայ ժողովրդի և իր գործերի զաւակն է, տեղեակ և շօշափող նորա ցաւերին, որոնց դարմանելու համար նորա հայրենասէր սիրտը մօտաւորապէս կէս դար այնչափ զօրաւոր ճիգեր է թափած։

Հայ Եկեղեցու այս զօրաւոր Ախոյեանն, լինելով ինքը ժողովրդի որդի, ցաւակից է եղած նորա ցաւերին և ուրախակից նորա ուրախութիւններին, ուսումնասիրած է իր ազգն, նորա բնաւորութիւնները, սովորութիւնները, ցաւերն ու պիտոյքները, ոչ թէ հայրենի հողից դուրս՝ մամուլի և գրքերի միջոցաւ, դանազան ճանապարհոր-

դական գրուածներից և տեղեկագրութիւններից, այլ ինչպէս շինականի խրճիթի, Պոլսի խանների մէջ, նոյնպէս և Հայաստանի դաշտերի և լեռների մէջ։ Եւ այս պատճառով այսօր գրեթէ համայն Հայ հոգևոր դասի մէջ չ'կայ ոչ ոք, բացի հայրիկից, որ կատարելապէս ճանաչէր Հայ ժողովուրդը Թուրքիայում, Ռուսաստանում, Պարսկաստանում և հետևապէս տեղեակ լինէր նորա վիշտերին, քանի որ նա բուն հայրենի հողի վերայ շօշափած և ականատես եղած է Հայի ցաւերին։

Հայրիկ, որպէս Եկեղեցական, բանաստեղծ, հայրենասէր, նշանաւոր ազգային գործիչ, ճշմարիտ Հայ, հրապարակախօս, մեծ քարոզիչ, այնքան մեծ ծառայութիւններ է մատուցել Հայ ազգին և այնպիսի եզակի երևոյթ է ներկայնում որ ամեն Հայ մարդի նուիրական պարտականութիւն պէտք է լինի ուսումնասիրել նորա օրինակելի մաքուր կեանքը, հայրենանուէր սիրտը, կարդալ նորա հոգեշունչ երկասիրութիւնները ու վարդապետութիւնները, որոնք մօտ կէս դար անդադար յուզել, շարժել են թշուառութեան և ստրկութեան մէջ անզգայացած և մեռած Հայութիւնը և ամենուրեք ծաւալել են նոր գաղափարներ, եղբայրական և հայրենասիրական նոր զգացումներ։

Հայրիկ՝ գիւղում թէ վանքում, մայրաքաղաքում թէ գաւառներում զանազան պաշտօնների մէջ, սկսեալ ուսուցչական ասպարիզից մինչև Պատրիարքական գահը, ամենուրեք եղած է միշտ ճշմարիտ Հայ գործիչ և շարունակ տքնել ու աշխատել է ազգի բարեկեցութեան համար։

Հայ ազգի նման մի ժողովրդի համար Հայրիկի կեանքը, նորա անցեալն ու ներկան կարող է օրինակելի տիպար լինել, որին պարտաւոր է հետևի ամեն ոք։ Զարմանալ պէտք է միայն նորա հոգու ազնուութեան և անկեղծութեան և սրտի վեհանձնութեան վերայ. նորա բարոյականութիւնը, անարատ ու առաքինի կեանքը միայն բաւական է, որ մարդ պաշտէ Հայ Եկեղեցու այդ նուիրական հոգևորականին։

Հայրիկն իր զօրաւոր ժողովրդականութիւնը ձեռք է բերել, երբ դեռ իբրև վարդապետ գործում էր Հայաստանի մէջ, և այսօր, գագաթնակէտին հասած, այդ ժողովրդականութիւնն միակ պատճառն է, որ նա՝ իր սիրած հայրենիքից դուրս՝ ապրում է Բիւզանդիոնի երկնքի տակ։

Թող Հայ ժողովուրդը կարդայ Հայրիկի կեանքը, կարդայ նորա գրական գործերը, կարդայ նորա սրտից բղխած ու արտասունքով ողողուած թուղթերը, որպէս զի իր առօրեայ կեանքի մէջ ընկերական, տնտեսական և հայրենասիրական ընտիր դասեր առնէ, որոնք

անշուշտ կազնուացնեն նորա հոգին ու սիրտը)։

Խրիմեան ծնած է 1820 թուականին Ապրիլի 4-ին, Վանայ Այգեստանները, Յանկուսներու թաղը, ուր կան մինչև ցայսօր իւր եղբօրորդիք և հայրենական տունն, որ կը կոչուի «Կրըմցոնց տուն»։ Խրիմեան մկրտուած է «Մկրտիչ» անուամբ՝ նոյն թաղի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Աւազանին մէջ։

Խրիմեանի մանկութեան օրերը վարժարանք չկային Վանայ մէջ. բայց կարդալ գրել կը սորվէին մանկունք տէրտէրէն, տիրացուէն, և արհեստի վարպետն՝ քերական և Սաղմոս ևս կը սորվեցնէր իւր մանուկ աշակերտին։ Խրիմեանի հօր տունը հագուստի համար տարազներ կը գործուէին, և աշակերտողք «ԽԱՆ ու սոլֆաջի» ալ կ'ուսանէին նոյն յարկին տակ՝ մի կարի եռանդուն, բարեպաշտ, համեստ և ընթերցասէր վարպետ մը. նա էր Խրիմեանի հօրեղբայրն։

Խրիմեանի հայրն տարազներ կը փոխադրէր Վանէն դուրս ի վաճառ. սովորաբար նորա յաճախ գնացած ու եկած տեղն էր Խրիմը, ուր ի նախնեաց յարաբերութիւն կար։ Այս է պատճառ« Կրըմցոնց տուն» և «Խրիմեան» կոչուելուն։

Թէ՛ ի բացակայութեան և թէ՛ յետ մահուան հօրն Մկրտչին, թէպէտ իւր մայրն գգուանքով և գորովով կը սնուցանէր որդին, բայց յատկապէս հօրեղբայրն էր խնամակալ, դայեակ և դաստիարակ մանկանն. նա է արձանագրած Հայրիկի ծննդեան թուականն. Խրիմեան մեծցեր է նորա գգուանաց համբոյրներով, նորա հրահանգիչ և քաղցր խօսքերով, նորա անձանձիր ուսուցմամբ, նորա առաքինութեան օրինակաւ, նորա գթած և կակուղ սրտով. նորա հոգին ներշնչած է Խրիմեանին լինել Աստուածասէր, մարդասէր, ազգասէր. նա բռնելով մանկան ձեռքէն ամէն գիշերային ու առաւօտեան և երեկոյեան ժամերգութեանց յԵկեղեցին կը տանէր, Ս. Երգոց, ընթերցուածոց ու աղօթից միտքը բացատրելով, ունկնդիր ընելով ժամանակին լաւ քարոզիչ Վարդապետաց և ծանօթացնելով նոցա, որոց օրհնութիւն միշտ խնդրուած է և զեղեալ ի գլուխ Մկրտչին։

Երիտասարդութիւնը, այն երջանիկ հասակն է մարդկային կենաց, որ թևեր կուտայ և կը խոյացնէ զմարդ քան զմարդն ի վեր, անհունութեան եզրները, մանաւանդ այն մարդուն ոյր հոգին ծանօթ է բարձրութեան, կարողութեան, գեղեցկութեան, բարութեան, սիրելու, որոնելու, գտնալու, գիտնալու, որոց կը բաղձայ, կ'երազէ, կը

թուի համնելու. երիտասարդութիւնը և այս հոգեկան վիճակը տիրած էին Խրիմեան Մկրտչին. նեղ կուգար իրեն հօր տունն և Ցանկուներու թաղն և կը հակէր ընտրել վարդապետական կարգը, իբրև ազգին մէջ ընդարձակ ասպարէզ ունեցող վիճակ։

Սակայն դեռ կապրէր իւր մայրիկն, նա որ արև տուեր էր Մկրտչին, որուն սիրտը կը չըջէր իբր ստուեր անբաժան իւր որդւոյն արևուն ետևէն, և հոգին կը հակէր կը դիտէր իւր զաւկի հոգւոյն գաղտնիքը, նա որ ցաւ քաշած էր, կաթով տածած էր իւր հոգւոյն հատորը, իւր աչքին լոյսը, նա խնդրած էր Արարչէն ուխտիւ որ տեսնէր Մկրտչի թագն ու պսակը։ Անհնարին էր դիմադրել ծնող մօր, և Նախախնամութիւնը թոյլ տուաւ որ կատարուի այդ բարի մօր ուխտը, վերապահելով կատարելու նաև Մկրտչին ալ ուխտը։

Խրիմեան Մկրտիչ նշանուած ու ամուսնացած եղաւ Սևիկեանց Մ.Յովհաննէսի դստեր հետ, որուն մի դուստր պարգևեց Աստուած, հարսն մի և թոռնեակ մի ունէր Մկտչին մայրը, իւր մուրազին հասած էր, և կը գոհանար Արարչէն։

Սակայն այդ ամուսնութիւնը չկրցաւ կապ դնել Խրիմեանի մտաց եռանդին և հոգւոյ թևերուն։ Նորա առաջին անգամ Վանէն դուրս ելնելու պատճառն կամ պատրուակն եղեր է զինուորագրութիւնը, երբ գաւառներէն Հայ զինուորներ կը ժողվէին։ Մկրտիչն ճիշդ զինուորական տարիքն ունէր, և ինչպէս շատերը՝ նոյնպէս և Խրիմեանը փախուցին 'ի Պարսկաստան։ Իւր ընկերն էր Տապաղեան Աքրեպասն, որոյ հետ՝ մինչև մեռաւ նա, միշտ մտերմութիւնը կը պահէր։ Անցնելով Խոյ քաղաքէն, Երասխի ջուրը, Մասիսին շուքն, Արարատայ հողը, Ս. Էջմիածնի Տաճարն և նշանաւոր Վանորայքը ու վայրերը ողջունելով, համբուրելով առաջին ջերմութեամբ, հիացումն, սէր, գորով, լոյս ճառագայթալից պայծառացուցին, ընդարձակեցին և լցին իւր մտաց և սրտի հորիզոնը. այն օրէն յօրինեցաւ նորա քնարն. նա ինքնին դարձաւ քնար, որով պիտի երգէր զԱյրարատ և հրաւիրակ լինէր նորա տարածեալ որդւոց։

«Որք, թէ ոչ ոտիւք, գէթ անձկայրեաց սրտին սիրով,
«Գան ճեմել ի հայրենի վայր տարփատենչ և վայելուչ»։

Միջոց մը չրջելով, դադար կ'առնու Ալեքսանդրապօլ նազելի Անիին բարելի Շիրակայ փարելով կուլայ, և կ'անցնի ի Կոստանդնուպօլիս։

Կ. Պօլիս այն ժամանակ մեծ Հայեր կային, մեծամեծ ասպարէզներ ունէին, մեծամեծ զոհողութիւններ կը լինէր չքեղ Եկեղեցիներ և վարժարաններ կառուցանելու. Հայկական գաւառները սկսած էին քիչ մը մօտէն ծանօթանալու և Հայ ամիրաներուն խնամքն ու առատաձեռնութիւնը վայելելու։ Մայրաքաղաքացի Հայք Օսմանեան պետութեան բարձր պաշտօններու մէջ հաւատարմաբար ծառայելով հանդերձ՝ կը մտածէին, կը հոգային ազգն, կ'օգնէին գաւառացւոյն իրենց պաշտօնին և յաջողութեան միջոցաւն։ Այդ Հայոց մեծ կեդրոնն Խասգիւղն էր յայնժամ։

Խրիմեան Խասգիւղի Հայոց աղջկանց վարժարանին ուսուցիչ կը կոչուի. միևնոյն ժամանակ ունկն դնելով վարժապետաց, և լսող լինելով երևելեաց խորհրդոց ու խօսակցութեանց, յորս միշտ նշանաւոր գրագէտ և ուսումնական անձինք կը գտնուէին, շատ օգուտ կը քաղէ նա իւր այս վիճակէն. իւր հետաքրքրութիւնն, իւր համակրանք ազդող դէմքն ու տարիքը, իւր քաղցր և հայրենախօս լեզուն, իւր համեստ բնաւորութիւնը սիրելի կ'ընեն զինքն բազմաց, և նշանաւոր ընտանեաց մէջ կ'ընդունուի իբրև դաստիարակ և իբրև բարեկամ։

Սըսոյ և Կիլիկիոյ կրթութեան մասին այն ժամանակ հոգ կը տանէր Ազգը, և ահա Խրիմեան կը տնօրինուի վարժապետ, այցելու, տեղեկագրով յուղարկուիլ այն կողմերը Պատրիարքարանի յանձնարարութեամբ։ Սըսոյ Կիրակոս Կաթուղիկոսն, որ բանգէտ և մարդ ճանչցող մէկն էր, կը տեսնայ թէ ինչ գեղեցիկ և թանգ մատաղ մի իւր ոտքով եկեր է Վանքին դուռը, կը ջանայ, կը փայփայէ, որպէս զի բռնէ զԽրիմեան իւր գաւթին մէջ. բայց նա իւր պաշտօնին միայն կը հետևէր։

Խրիմեան կը վերադառնայ Կ. Պօլիս. ի Կիլիկիա այցելութիւնը գոհացուցիչ էր գաւառին և Առաջնորդներուն ու Առաքելին միանգամայն. աճեցաւ Խրիմեանի համբաւն, և աւելի Ազգային եղաւ, երբ նա գրեց ու հրատարակեց իւր հրաւիրակներ «Արարատեան և Երկրին Աւետեաց»։

Խրիմեանի գրական մի գործն է տետրակ մը «ընդդէմ պապականութեան» հրատարակուած, զոր գրած է եռանդուն ջատագովութեամբ՝ իբրև Հայկական Եկեղեցւոյ հարազատ՝ պարսաւելով Վատիկանի գերիշխանութիւնը իբրև հակառակ Քրիստոսի խոնարհ թագաւորութեան և Ս. Աւետարանի հոգւոյն։ Օրուան հարկն ստիպեր է այդ տետրակն ի լոյս ածել. զի այդ օրերը Վենետկոյ վանականք և Գոլէճեանք կը թևակոխէին մինն զմիւսն գերազանցել չարախօսելու Հայոց

եկեղեցին, որպէս զի անմեղադիր երևէին ինքեանք Պապին աչքին։ Եւ դոցա ելևէջներն ու շփոթք կալէկոծէին Կ. Պոլսոյ Հայերը. պապականութեան նուիրակներ Կ. Պոլիս եկած էին փորձելու Հայ Հռովմէականաց հաւատքն և միևնոյն ժամանակ Նաբոլէօն Գ.ի քաղաքական պապութիւնը. կամ պապական քաղաքականութիւնը կը շլացուներ և կը շարժէր նոյն իսկ բուն Հայերու գաղափարը։ Այն ատենուան Եկեղեցականներէն և Ամիրաներէն ոմանք իրենց անձն ու ազդեցութիւնը նուիրած էին այն նուիրակութեան՝ փառասիրութեամբ, և մեծ շփոթ կար Ազգի գաղափարին ու վիճակին առջև։

Արդէն Խրիմեանի ամուսինն և դստրիկ թողած էին զաշխարհ, և այս անգամ երբ վերադարձաւ Վան՝ պսակուեցաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ հետ, 1854 թուին. կատարուեցաւ իւր նախկին ուխտը։ Աղթամարայ Տաճարին մէջ ձեռնադրուեցաւ Վարդապետ Վանայ Առաջնորդ Գաբրիէլ Արքեպիսկոպոսէն, որ այն ժամանակ Աղթամարայ Կաթողիկոսութեան տեսչութիւն ևս կը վարէր։ Խրիմեանի իղձն էր այդ մեծ Վանքին մէջ ծառայել. արդէն նախապատրաստուած էր որ մամուլ և ժառանգաւորաց վարժարան պիտի հաստատէր այդ տեղը, և լուսաւորէր այդ վանքին մութ ու խաւարի մէջ ընկղմեալ թեմական հայ ժողովուրդն և հայ Եկեղեցին, ժողովուրդ՝ որոյ մէջ բազմաթիւ հայք քրդերէն կը խօսէին, անգէտ և անծանօթ մնալով ազգային լեզուին և ամէն բանին, ինչպէս կը գտնուին մինչև այսօր։ Պոլսոյ մտածող և զգացող հայ անձինք այդ խորհուրդը տուած էին իրեն, և խոստացեր էին ինչ որ հարկաւոր էր։ Բայց Աղթամարայ միաբանք և Վասպուրականի գործի վրայ եղողներ մերժեցին Խրիմեանն և ծիծաղեցան նորա յոյսերուն վրայ։ Խրիմեանին բաժին մնաց Վանայ բեմը. իւր քարոզութիւնք նոր ճանապարհաւ էին, աստուածային ու ազգային, երկնային և երկրային հոգևոր և մարմնաւոր կենաց վարդապետութեամբ նա զօրաւորի մը պէս պատերազմ կը մղէր տգիտութեան, կեղծաւորութեան, սուտ բարեպաշտութեան և նախապաշարմանց դէմ, և կը գերէր կգրաւէր նոր սերունդն ամբողջ՝ լուսաւորութեան գրօշակին ներքև կամաւորաց բանակ մը ձգելով իւր ետևէն։ Առանց անագանելու ծագեցաւ նախանձ, և հալածանք տարագրեց զինքն վերոտին ի Կ. Պոլիս։

Օտեանց Հայրն, անմահն Պողոս աղան, իր տունն և սեղանը և քսակը ազգին էր նուիրած. ամէն օր և գիշեր լի էին այնտեղ եկեղեցական, գիտնական ազգասիրաց կաճառը, կը խորհէին, կը կամէին, կուտային, կը պատրաստէին կը խօսէին, կը գրէին ինչ որ ազգին յառաջադիմութիւն և կենդանութիւն կը համարէին։ Սահմանադրութիւնն ևս այդ յարկն տակ և այն դայեկաց ձեռքով ծնած է։

Այդ կաճառին մէջ կը գտնուէր, կ'ընդարձակուէր, կը լսէր և կըսէր Խրիմեանն ալ, բայց սա միշտ իւր «Խայասանն» կը յեղյեղէր, և զինքն Հայաստանին գործիչ կը ներկայէր։ Արմատը կենդանացնել պէտք է», կըսէր Հայոց, և վերջապէս կը յաջողէր տպագրութեան մամուլ մը ձեռք բերել և «Վասպուրական Արծուի» ամսաթերթ կը հրատարակէր ընդ հովանեաւ թեւոց Խաչին։ Իւր Հայրենասիրական ձայնը ի հեռաւորս կը հասնէր։

Օտեանն էր այն հոյակապ հողին որ ամենէն մեծ գումար մը կը դնէր Խրիմեանի յաջողութեան, և իրեն նմանեաց հետ քաջալերելով զՎարդապետն՝ կը վերադարձնէին «Վասպուրական Արծուին» ի Վասպուրական (1856)։

Խրիմեան հասնելով Վան, թէպէտ ժողովուրդն և երիտասարդութիւնը և երևելիներէն դաս մը շատ համակիր եղան իրեն, բայց իշխանաց մեծ մասն, որոց ձեռքն էր Առաջնորդարանն և Առաջնորդն, և Վանականք և Վանօրայք մեծ ընդդիմութիւն և թշնամանք ունեցան նորա դէմ. անմիջապէս երկու բանակի բաժնուեցաւ Վան, բայց բուն բաժանարարութեան պատճառը Պոլսէն էր։ Հակառակողք կը դիմէին Պոլսոյ երևելեաց այն դասուն, որք հակառակ էին Օտեանց կամ Օտեանց տան խմբին, և նոցա հրաշանգով կը մերժէին Խրիմեանն և իւր ձեռնարկն ու առաջարկը. բայց Խրիմեան ալ պաշտպանութիւն կը վայելէր այն դասէն, որ յետոյ կոչուեցաւ «Լուսաւորեալք» և միւսք «Խաւարեալք»։ Այս անգամ ևս Խրիմեանին աչքը Աղթամարն էր, սակայն անկարելի եղաւ յաջողիլ. ուստի Վարագայ Վանքը խնդրեց, որ Վանին աւելի մօտիկ էր, ընդարձակ և պատրաստական շէնքեր ունէր, բայց Վարագն ևս Առաջնորդին և իշխանաց Վանքն էր, զբօսավանքն։ Յետ մեծամեծ դժուարութեանց և աղմկալից անցքերու, վերջապէս Պոլսոյ Պատրիարքարանը՝ որ այն ատեն Լուսաւորելոց ազդեցութեան տակն էր, անկախ Վանայ Առաջնորդարանէն յանձնեց Խրիմեանին, ուր փոխադրուեցաւ մամուլն, սկսաւ ժառանգաւորաց գիշերօթիկ վարժարանն և հրատարակուեցաւ «Վասպուրական Արծուին». սակայն շարունակուեցաւ Վանի հակառակորդաց ջանքն՝ խափանելու այն գործերը, չարախօսութիւն դնելով Խրիմեանին վրայ և զանազան դաւեր գործելով. իսկ Խրիմեան զինքն կը պաշտպանէր իր գրչով, իր քարոզներով և Կոստանդնապոլսոյ բարերարներով։

Փորձառուն գիտէ թէ՝ տպարան և գիշերօթիկ օրքան ծախուց դուռ կը բանան, մանաւանդ երբ ամէն պէտքը Պոլիսէն պիտի

փոխադրուէր. արդարև «բարերարները» մեծ զոհողութիւն ըրեր էին նպաստելով Վարդապետին, բայց վերջապէս յետ երեք տարուոյ ընկճեցաւ գործողին ոյժը, և հարկ եղաւ նորագոյն նպաստ հանգանակելու համար դիմել Ռուսաստանի Հայոց։ 1860ին անձամբ կ'երթար Խրիմեան ի Ս. Էջմիածին, Վանայ Առաջնորդ Իգնատիոս Վարդապետին հետ. սա Եպիսկոպոսանալու կ'երթար։ Հոգելոյս Մատթէոս Կաթուղիկոսն երբեմն սառն, երբեմն ջերմ տեսակցութիւն կ'ընէր Խրիմեանին. միաբանութեան միջև ևս համակրողք կային, սակայն մեծ մասն արհամարհոտ աչքով կը նայէին այդ ժողովրդական Վարդապետին. բայց բարեբաղդութիւն էր որ Վաղարշապատցի Մալինցեան Գրիգոր աղան, Կաթողիկոսին, Սինոդին և միաբանութեան առջև պատկառելի և ազդեցիկ անձն այն տեղն էր, ծանօթ և սիրող Խրիմեանի գործոց և համբաւոյն, այլ զոր անձամբ դեռ նոր կը տեսնէր. նա յաջողեց Կոնդակ և հրաման ստանալ և յուղարկաւորել պատուով Խրիմեան ի Թիֆլիզ։

Թիֆլիզի վիճակաւորն էր այն ժամանակ Զալալեան Սարգիս Եպիսկոպոսն։ Նա մեծ պատուով ընդունեց Խրիմեանը և Առաջնորդարանը հիւրընկալեց, Կոնդակը հանդիսապէս ընթեռնուլ տուաւ, ինքն անձամբ դրուատեց զԽրիմեան, նպաստելու յորդոր կարդաց, և շէն գումար մը ստորագրեց հանգանակութեան տուսարին գլուխը. իւր կառքով այցելութեան կը շրջեցնէր նշանաւոր անձանց, բայց ամէն կերպով կը հսկէր որ առանձին տեսնուելու մարդ չերթար Խրիմեանին, և ոչ Խրիմեան այլոց՝ առանց իրեն։ Խրիմեան սկսած էր քարոզել Թիֆլիզի Եկեղեցիները. ժողովրդեան թիւը չկար որ կուգային լսելու, հասկնալու, ոգևորուելու Աւետարանի ճշմարտութենէն և Հայ Վարդապետի մը ճշմարտախօսութենէն ու քաղցրութենէն։

Խրիմեան «Կռունկի» մէջ նշանաւոր յօդուած մը գրեց Հայ Եկեղեցականաց պարտականութեան վերաբերեալ, որ համաձայն էր իւր քարոզներուն։ Խրիմեանին լսողն և ընթերցողն միանգամայն համակրուեցան։ «Ահա Վարդապետ» կ'աղաղակէին. և կը շրջապատէին զինքն համբուրիւ և գովեստներով, անձամբ և գրով. չտեսնուած ոգևորութիւն մի ծագեցաւ ժողովրդեան մէջ, և նախանձը յայտնուեցաւ Զալալեանի և իւր կուսակիցներու կողմէն, աշխարհական և կղերական դասէն. անտանելի էր նոցա համար Խրիմեանի վայելած ժողովրդականութիւնը։ Նորա բացած ճանապարհը, վառած ջահն կը առաջնորդէր Ազգին ճանչնալու և ընտրելու լաւն վատէն, անկեղծն կեղծաւորէն, լոյսն խաւարէն, կուռքը Խաչէն, և այլն։ Անմիջապէս վնասեալ դասն խորհեցան, գրբեցին Մատթէոս Կաթողիկոսին և որոց անկ էր ի Ս.

Էջմիածին, և ժողովրդեան մէջ ևս համբաւ հանեցին, որպէս թէ Խրիմեանի գրիչն ու բերանը պետութեան ընդդէմ խօսելով, կառավարութիւնը ծանր նկատած էր, և հրամայած էր որ Ռուսաստանէն դուրս հանեն։ Այնպէս չէր սակայն. Խրիմեան կանչուած էր Մատթէոս Կաթողիկոսէն. գնաց Խրիմեան Գանձակ, Ղարաբաղ, իջաւ ի Ս. Էջմիածին, դարձաւ Երևան, Հին Նախիջևան, Աղուլիս, ապա Ատրպատական, և անտի ի Վան։ Կաթողիկոսն առեր էր Խրիմեանի ձեռքէն իւր տուած Կոնդակը. բայց նա ունէր Աւետարան. ուր որ գնաց քարոզեց և սիրալիր ընդունելութիւն գտաւ, և Վարագայ տպարանին ու վարժարանին նպաստներ մատուցուեցան։ Թիֆլիզի «խաւարելոց» և «լուսաւորելոց» ճակատամարտի զոհն էր եղած Խրիմեան և ոչ Ռուսական կառավարութեան։ Ինչպէս երբեմն Կ. Պոլսոյ Ձեմարանն՝ նոյնպէս Թիֆլիզի համար ևս Ներսիսեան վարժարանն էր և է ասպարէզ կրուուի. Եպիսկոպոսն և խումբ մը՝ իրենց սեպհականած էին այդ վարժարանի ներքինն և արտաքինն. այլ ուրիշ խումբ մը զանոնք մէկ կողմն կը հրէին. մինն զմիւսն կը անուանէր մատնիչ, միւսն զսա կը կոչէր Լուտերական, անկրօն. երկու կողմն ևս բարեմիտներ կը գտնուէին հաւատալով և հետևելով. Խրիմեանը ճանապարհի ուղղութեամբ կը ընթանար թէպէտ, բայց լուսաւորելոց բանակն աւելի մերձ կը թրուէր. ոյժ կը առնուին սոքա Վարդապետին ընթացքէն, բայց այնքան ուժով չէին որ պաշտպանէին իրենց զոհը. դեռ հասած չէր, բայց պիտի հասնէր վերջապէս այն օրը, երբ Զալալեան Սրբազան կոչուէր նոյն Մատթէոս Կաթողիկոսէն թողլու Թիֆլիզը, և Ներսիսեան վարժարանին հետ՝ այդ վիճակի Ազգային բոլոր ասպարէզը գրաւէին ժողովրդեան կուսակիցք։ Ահա թէ Խրիմեանն ի շահ որոց վնաս և տարաձրութիւն կրեց։ Կարևոր տեղ մը կը բռնէ Խրիմեանի այս ուղևորութեան պատմութիւնը, զոր բաւական մանրամասնօրէն գրած էր Վարագայ աշակերտներէն Սրբուանձտեանց Գարեգինն (այժմ Եպիսկոպոս), որ հրատարակուած է Կոստանդնուպոլսոյ «Մեղուի» մէջ նոյն տարին՝ Ռուսահայոց լեզուաւ։

Վարագայ վանքը իւր վարժարանն ու տպարանը պայծառացոյց այս միջոցին, և «Արծուի Վասպուրականն» Թուրքիոյ և Ռուսիոյ Հայաբնակ ամէն քաղաքները կը ընդունուէր և կը կարդացուէր յօժարութեամբ ու զոհունակութեամբ։

1862ին Կ. Պոլսոյ Պատրիարքարանը կը կարգէր զԽրիմեան Մշոյ վիճակին Առաջնորդ և Ս. Կարապետի վանահայր, նորա ձեռքը թողլով և Վարագը։ Այս ժամանակ Վարագայ աշակերտներ զարգացած

էին բաւական և «Արծուի Վասպուրականը» կը խմբագրէին. խումբ մի ևս իրենց Վարդապետին հետ Մշոյ Վանքը կուգային հանդերձ մի մամուլով. Վանքին մէջի վարժարանն՝ վարժարան կը լինէր. և միւս տարին գարնան «Արծուիկ Տարօնոյ» թերթիկ մը կը հրատարակուէր Տարօնոյ մամուլէն՝ խմբագրութեամբ Սրուանձտեանց Գարեգնին։ Ամենէն մեծ և դղրդիչ դէպքն է Խրիմեանին համար Մշոյ պաշտօնավարութեան միջոցը։ Այստեղն էր երբ նախ աշակերտք և ապա համայն Մշոյ ժողովուրդք «Հայրիկ» կոչեցին Խրիմեան Վարդապետը, և որ ընդհանրացաւ ապա համայն Հայոց մէջ։

Խրիմեան Հայրիկը Մշոյ աշխարհի և Ս. Կարապետի Վանքին մէջ մեծ և դժուարին հակառակութեանց հանդիպեցաւ. այդ պատմական, նուիրական և միշտ սիրելի Հայոց վայրը խորին տգիտութեան և անկարգութեան մէջ էր. կ'ուտէին, կը յափշտակէին և առ ոտն կը կոխէին դաս մը մարդիկ և Վանականք այդ Վանքին Սրբութիւնն ու ճոխութիւնը և ժողովուրդին բազմութեան հոգին ու արիւնը, առանց խիղճ ընելու և պարտականութիւն կամ պատասխանատուութիւն յանձն առնլու. ժողովուրդն ևս համակերպած էր տալու, լռելու, տեսնելու և հլութեամբ ու յօժարութեամբ կրելու այդ ամէնը, համարելով իւր ճակատագիր կամ ժամանակի և տեղական օրէնք. բայց երբ Հայրիկէն իրաւանց և լուսաւորութեանց ձայներն լսեց, երբ «Տարօնոյ Արծուիկ» սկսաւ կարդալ, բացուեցաւ իւր աչքը. խօսիլ, դատել և բողոքել սկսաւ, ուժգին ցնցում մի տեղի ունեցաւ և ուտիչներ զգալով իրենց վտանգն ու չկրնալով դիմանալ այդ ահագին յեղափոխութեան՝ զանազան դաւեր, զրպարտութիւններ և մատնութիւն ի գործ դրին Հայրիկի անձին, նորա պաշտօնին և աշխատակցաց դէմ, և իրենց օժանդակ ունեցան Կարնոյ մէջ չարութեամբ ծերացեալ Քահանայ մը, որ այն ժամանակ Առաջնորդական փոխանորդութեան պաշտօն կը վարէր, զի Տ. Յարութիւն Սրբազանն Կ. Պոլիս էր։ Այդ Քահանային՝ գործակցութեամբ քանի մը անուանի աշխարհականաց՝ պաշտօնապէս կը հաստատէր Կարնոյ կուսակալին վճիռը, Հայրիկին վրայ Մշոյ չարախօսաց գրածները, և Կ. Պոլսոյ մէջ պարբերաբար կը հրատարակէր »Մեճմուայը Հավատիս» լրագիրն՝ գայթակղեցնելու համար զկառավարութիւն և զազգ Հայրիկին վրայ։ Այդ սոսկալի մատնութեան վաշտն մեծաւ մասամբ կը բաղկանար կղերէն, որոց զօրապետ էին մի հինաւուրց Եպիսկոպոս ինչպէս և մի խիզախ ու փառասէր Վարդապետ որք պաշտօն վարած էին Վանքին և Մշոյ մէջ, և ամէն բան կ'ընէին կրէին անպատկառ, հասնելու համար վերստին նոյն պաշտօնին. իսկ նոյն

հրահանգիչներն էին աշխարհական դասէն ազդեցիկ անձինք, որոց համար պատրաստ սեղան մի եղեր էր Մուշն ու Վանքը, և խորտիկ ու ըմպելի Վանքին գանձն ու ժողովրդեան արցունքը։

Ահա ճիշդ այդ միջոցները Հայրիկ կ'ուղևորէր Կ. Պոլիս, Կայսերական կառավարութենէն և ազգէն այցելութիւն և խնամք խնդրելու ժողովրդեան կացութեան մասին։ Զարախօսութիւնք այնքան զարհուրելի էին որ անոնց առջև ոչ միայն Հայրիկը, այլ և Մշոյ ամբողջ Հայութիւնը կորստական դատաստան կը կրէին. բայց կառավարութիւնը յանձնաժողով մը կազմել տնօրինեց, այս բաները արդարութեամբ քննելու համար։

Յանձնաժողովն անաչառապէս մանրամասն քննութեան առաւ խնդիրներն և տեղեկագրեց Բ. Դրան, հերքելով ամբողջ ամբաստանութիւնը և ցոյց տալով թէ Խրիմեան Հայրիկն ծառայած էր խղճի մտօք Տէրութեան և Ազգին։ Կ'արդարանար Հայրիկն և կը հաստատուէր իւր պաշտօնին մէջ։ Այդ միջոցները արդէն դադրեր էր մամուլն, հալածուեր էին չարչարանօք Խրիմեանի աշխատակիցներն և վարժարանի որբերը լեռներ ու դաշտերը փախած, որոցմէ ոմանք ուզելով իրենց աղէտը հասկցնել Հայրիկին, չը գտնելով գրիչ և մելան, իրենց բազկի երակը ծակեր, արիւնով և խոտի ցօղունով գրած էին թուղթ։

Խրիմեան նորէն կը դառնար Կ. Պոլսէն. կրկին կ'ենթարկուէր դաւաճանութեան, կրկին կ'ամբաստանուէր նա միաբանից և միաբանելոց կողմանէ Մշոյ իշխանութեան ատեանը, ուր կը հրաւիրուէր պատասխանելու. և երբ կը տեսնէր թէ դիւրին չէր իսկոյն իւր անմեղութիւնը հաստատել, այսպէս կը խօսէր ատենին մէջ. «Իմ հակառակորդացս ոսկին պիտի հատնի, բայց իմ համբերութիւնս չը պիտի ըսպառի. կը համբերեմ, մինչև արդարութիւնը հասնի ու պաշտպանէ զանմեղութիւնը»։ Արդարութիւնը սակայն բաւական հեռուն կը գտնուէր յայնժամ։ Մեծ ցասմամբ լցուած ժողովուրդ և գիւղապետք Խնուսայ, Պուլանըխի և դաշտի Հայոց՝ ժողվեցան և Խրիմեան Հայրիկը առաջնորդեցին տանելու Վանքը. սակայն Վանքին ագարակին մէջ պաշարուեցան զինեալ Քրդերէ և Վանուց շուրջ եղած դաս մը Հայերէ, որ ղրկուած էին Վարդապետներէն՝ արգիլելու համար Հայրիկը. բանը այնտեղ հասաւ, որ պաշարողք բաղխեցան իրարու, և ահա կենաց վտանգներ սկսան երևան գալ. հազիւ մէջ կը մտնէր Հայրիկն, և զէնքն առաջնորդողները կը համոզէր, յարձակողները կ'ամօքէր, իսկ ինքն իւր ուղին կ'ուղղէր ի Կ.րին։ Վանականներ հասկցան իրենց ծանրագոյն պատասխանատուութիւնը. ուստի անմիջապէս յերև-

րեցին զրպարտութիւններ գրելով և տարածելով ժողովրդեան մէջ. Կ. Պոլսոյ մէջ, ուխտաւորաց մէջ, թէ Խրիմեան Վանքի գանձն էր կողոպտեր, Խաչեր ու Աւետարաններ էր գողցեր, թէ. . . և այլն և այլն։

Բայց ինչո՞ւ այս ամէնը. մինթէ Հայրիկը հացն, հագուստն ապրուստն կտրած էր Վարդապետաց, զրկած էր գիրենք. ոչ երբէք, ընդհակառակն աւելի շատ և աւելի աղէկն ունէին։ Սակայն Հայրիկն կանոն դրած էր, համարատուութիւն, հաշիւ և կարգապահութիւն սահմանած էր։ Յառաջ քան զայն՝ Ս. Գերեզմանի ամբողջ արդիւնքը, մոմագին և Մատաղազին և զրկուած նուէրները, Լուսարար Վարդապետին և քանի մը Հայր Սրբազաններու սեպհական իրաւունքն էր. այժմ Գանձանակ, տումար և հսկող հաստատուեցաւ։ Յառաջագոյն մի Վարդապետ ունէր քանի մը ձի և սպասաւորներ, որոց պէտքն ու ծախքը Վանքէն էր, կանոնը բարձաւ այդ բաները. նուիրակութիւնը տեսակ մը վարձակալութիւն էր և այլն։ Թէպէտ կար տումարի պէս թղթատետր, բայց արդեանց թափթփուկներ միայն կը գրուէին և ուխտաւորաց տուած դարպասն, զի ուխտաւորք անձամբ կուտային և կը պահանջէին որ թէ տուրք և թէ իրենց անունը իրենց աչքի առջև արձանագրուէին։ Ահա թէ ինչո՞ւ կը հալածուէր Հայրիկն։ Եւ մինթէ այդ խեղճ Վանականները այնքան զօրաւոր էին որ այսքան քաջութիւն ցոյց կը տային ընդդէմ Կեդրոնական վարչութեան և ընդդէմ այնքան բազմաթիւ ժողովրդեան և Հայ ազգին հանրական ոյժին։ Ոչ։ Ցոյց տուինք կանխաւ նոցա ոյժը, որոցով կը քաջալերուէին, և այն էր ի Մուշ, ի Կարին և ի Կ. Պոլիս։ Վարդապետներու շահը այդ ուժերու մէջ կը բաժնուէին։ Հասաւ Պոլիս Հայրիկն, և այս անգամ Պատրիարքարանն քննիչ և կարգադրիչ կը կարգէր Կարնոյ Առաջնորդ Վեհապետեան Տ. Յարութիւն Սրբազանն, որ գնաց Վանքը, և երբ տեսաւ որ Վանականք ստահակութիւնը չափազանցեցին, վերջապէս տարագրութեան դատապարտեց Վարդապետներէն վեցը, զորս Պատրիարքարան Բ. Դրան միջոցաւ զրկեց Ս. Երուսաղէմի Վանքը. իսկ մնացեալները հպատակեցան Կեդր. Վարչութեան տնօրինութեանց։ Այդ աքսորեալները յետոյ Հայրիկը ժողվեց և դարձոյց Վանքը։

Անմիջապէս չ'վերադարձաւ Հայրիկն. նա Կ. Պոլսոյ մէջ անայլայլելի կը մնար. կը գրէր։ Այդ միջոցին ի լոյս հանեց «Մարգարիտ արքայութիւն երկնից» մարգարտեայ մատենիկ. և երբ օրը հասաւ, մեկնեցաւ։ Կարնոյ կուսակալին նշանաւոր տեղեկագիր մը մատոյց Մշոյ երկրի նկատմամբ. նկատողութեան առնուեցաւ այդ տեղեկագիր, որոյ արդիւնք եղաւ Վսեմ. կուսակալին անձամբ քննութեան ելնել այն աշ

խարհին, և եօթնասուն նշանաւոր անձինք տարագրել Ռումելիի կողմերը, որոց մեծ մասն Քիւրդ էին։

Կարնոյ մէջ ստացած է Հայրիկն Հռովմայ Ս. Պապին հրաւիրագիր շրջաբերականը, Պապին անսխալութիւնը հաստատող ժողովոյն երթալու՝ իբրև Առաջնորդ Տարօնայ. ինչպէս Ս. Պատրիարքին և ամենայն Առաջնորդաց ևս ուղղեալ էր. ամէնքը լռութեամբ արհամարհեցին, բայց Հայրիկ գրութեամբ մը, ցոյց տալով Քրիստոնէական հեզ և ազատ հոգի, մատնանիշ կ'ընէր թէ «Այդպիսի ժողովոյ մի տեղն լինելու էր Քրիստոսի խոնարհ թագաւորութեան Ծննդեան Մսուրին կամ Գողգոթային մօտ, և ոչ Հռովմայ վէս Աթոռին»։

1868 թ. Հայրիկը Երեմիա վարդապետի հետ Եպիսկոպոս կը Ձեռնադրուի Տ. Գէորգ Ս. Կաթողիկոսէն, իւր ուխտն ընելով և Օծումն ու Կոնդակն ստանալով ի վերայ «տանն Տարօնոյ»։ Ս. Միւռոն օրհնելու հանդիսաւորութեան առթիւ մեծ բազմութիւն թափած էր ի Ս. Էջմիածին, և Հայրիկ ամենեցուն ցանկալին և ամենեցուն ուրախութիւն եղած էր այդ տօնին։

Յետ Ձեռնադրութեան, Սրբազան Հայրիկն Ս. Իջման տեղւոյն համօրէն միաբանութեան և ժողովրդոց բազմութեան մի հոգեռանդ ճառ խօսեցաւ Մայր Աթոռոյն, Հայկական Եկեղեցւոյն՝ և Հայ Եկեղեցականութեան նշանակութեան վերայ. այս իւր ուղերձն էր։

1869ին, կը գտնուէր Ս. Հայրիկն իւր հօտին գաւիթը, և աշնան մօտ՝ երբ վերստին Ս. Կարապետի վարդապետաց փորը կշտացեր էր, իրենց խայթոցը սրեր էին, մեծ ժողով կար վանքը և մեծ յատակագիծ մը կար գործադրուելու, երբ յանկնկալս Մշոյ փաշան անձամբ վանքը կուգար պաշտօնապէս շնորհաւորելու Ս, Հայրիկին Պատրիարք ընտրուիլը. յայնժամ կը ժամանէր Ազգային պաշտօնական հեռագիրն ևս. և ահա ժողովեալք կը փոխեն իրենց դէմքն ու դերը, և երամովին կ'երթան շնորհաւորութեան համբոյր նուիրելու։ Նոյն օրերը Կարնոյ կուսակալութենէն ևս յատուկ պաշտօնեայներ կը ժամանեն «հրաւիրակ» Պատրիարքին. և հոկտեմբեր 3ին կը մեկնէր Ս. Հայրիկն Ս. Կարապետի վանքէն, յուղարկաւորեալ շքեղ հանդիսաւորութեամբ, և միանգամայն անհամար բազմութեամբ հեծելոց և բոկոտն աղքատաց, մերկ ու մատաղ մանկտւոյն Տարօնոյ որ կ'աղաղակէին. «Հայրիկ, Հայրիկ, մի՛ մոռանար աղքատ Մշեցին և անոր խեղճ մանկտին»։

Ս. Հայրիկ կը հեռանար Վանէն և Մուշէն, Վարագէն և Ս. Կարապետէն, այդ տեղերը ձգելով խումբ պատանեաց և երիտասարդաց,

որք ուսած և զարգացած էին այն կրկին Վանքերու գիշերօթիկ վարժարանաց մէջ: Նոքա արդէն իրենց գտնուած վարժարանաց մէջ և գաւառին այլ և այլ գիւղերը սփռուած էին իրենց գիտցածն ուսուցանելու, իրենց կրցածն ընելու. ոմանք ևս վարդապետ և քահանայ եղած էին. երկար կը լինէր եթէ թուէինք դոցա թիւն և անուններն. այդ երկու բազմահայ գաւառները, Վասպուրական և Տարօն, Ս. Հայրիկի երկանց զաւակներ կը կազմեն իրենց քիչ շատ ուսեալ սերունդով: Դոքա համօրէն Ս. Հայրիկի հոգերով և հոգւով սնած որդիք և թոռունքն են: Դեռ լոյս և կրթութիւն ծաւալող ընկերութիւնք կազմեալ չէին Կ. Պոլսոյ մէջ, դեռ նոցա առաքեալք առաքեալ չէին այն կողմերը, այլ սակայն Վարժարանք և վարժապետք կային, և այն պատրաստ տարերք օժանդակ և դիւրացուցիչ հանդիսացան ընկերութեանց ձեռնարկին:

1869 Սեպտ. 4ին Կ. Պոլսոյ Ազգային Երեսփոխանական ժողովոյ քուէով ընտրուած էր Ս. Հայրիկն Պատրիարք Թուրքիոյ Հայոց: Ս. Հայրիկի օրով թէ գաւառաց մէջ ամէն ուրեք կազմուեցան Սահմանադրական ժողովներ և խորհուրդներ, յօրինուեցան հրահանգներ, և Ազգային ժողովն այնքան յաճախ, և այնքան արգիւնաւոր նիստեր ունեցաւ,—չորս տարուան մէջ վաթսուն և չորս նիստ Ս. Հայրիկի նախագահութեամբ,—և յոյժ կարևոր և օգտակար ծառայութիւններ մատոյց Ազգին, մանաւանդ գաւառացւոց՝ որոց մէջ նշանաւոր տեղ կը բռնեն դատաստանական և ուրիշ կարևոր խնդիրներ:

Ս. Հայրիկի օրով ջնջուեցաւ Հիւանդանոցի և Պատրիարքարանի վրայ ծանրացեալ պարտուց ահագին գումարն, և այս՝ տունէ տուն, Եկեղեցիէ յԵկեղեցի շրջելով, հանգանակելով, և սակայն ըսին թէ՞ տնտեսութիւն չէր գիտեր նա: Նա ժողովրդեան շարունակ Աւետարանի հաց և մարմնոյ հաց քարոզող էր. առաքինութիւն և աշխատասիրութիւն, պանդխտութենէ խոյս տալ և խնայողութիւն ընել կը յորդորէր, և սակայն կըսէին թէ՝ տնտեսագէտ չէ: Նորա տեսութիւնք, դիտողութիւնք և առաջարկութիւնք, որք կը տեսնուին Ազգային ժողովոյ և Քաղաքականի ու Տնտեսականի արձանագրութեանց մէջ, մեծ մասամբ լուրջ տնտեսագիտական են: Նա լաւ հասկցած էր թէ Հայ Ազգն շատ բանի պէտք ունի, և այս պէտքերը իր դրամով պիտի հոգայ, դրամ շահելու, դրամ ունենալու է որ հոգայ, հոգայ որ ապրի և յառաջանայ: Նորա հրաւէրին վրայ զանազան եղանակներ առաջարկուած են Ազգային տուրք և դատաստանական դրամագլուխ հաստատելու, հոգևորականաց վիճակը բարւոքելու, բարւոք հոգևորականներ պատրաստելու. առաջարկ-

ներ և եղանակներ, որոց մէջ մասնագիտութիւն ունենալ կը թուի կարծես: Սակայն ըսին և կը ըսեն թէ՝ նա տնտեսագէտ չէր: Ինչու կըսեն: վասն զի երբ պատրիարքութենէ հրաժարեցաւ, պարտական էր իւր անձն: Ի զուր այնքան յարձակումներ տեղացին ժամլոյ միջոցաւ Ս. Հայրիկին վրայ, որոց քրիստոնէաբար համբերութեամբ տարաւ նա, մինչև Վարժապետեան Սրբազանի պատրիարքութեան առաջին տարին, ուր պատրիարքական ստորագրութեամբ հրատարակուեցաւ Մասիս լրագրի մէջ թէ Խրիմեան Հայրիկն պարտք չունէր Պատրիարքարանին: Հաշիւները ցոյց կուտային թէ Ս. Հայրիկն բաւական կարևոր գումար մը ևս պահանջ ունէր, բայց արդէն փող անցեր էր. ինքն գոհ էր պարզ հացով և ջրով: Նա ազգային տնտեսութիւն գիտէր, այո, բայց անձնականն չգիտէ. այս բանն իրեն ամօթ չէ, այլ պատուաբեր:

Յոյժ ի խոր խոցեցաւ Ս. Հայրիկն և ցայսօր բժշկուած չէ այդ խոցը, երբ առին նորա վրայէն Մշոյ վանահայրութիւնը: Նա ոչ միայն կը ափսոսար իւր քրտինքն և կրածները այդ Ս. տեղի համար, այլ անսահման սիրով կապուած էր և է Տարօնոյ աշխարհի Սրբազան վայրին և հողոյն և մարդոյն: Բողոքներ ըրաւ, իւր եպիսկոպոսական ուխտն և օծումն յառաջ բերաւ «իբրև Տարօնոյ եպիսկոպոս», Եկեղեցւոյ օրէնքը յիշեցուց. լսելի չեղաւ: Նա լռեց: Նորա հոգին վարժ չէ անգործութեան. ամէն կիրակի քարոզներ խօսելով և նոր Պատրիարքին համակիր լինելով ի բնուստ խորհրդակցութեան կը գտնուէր, և ապա Կրօնական ժողովոյ ատենապետ կը ընտրուէր: Սակայն միւս կողմէն գրաւոր ընտիր գործեր կը հանէր ի հանդէս: Նա գրեց «Խաչին ճառ», որ մի հիանալի մատեան է, Եկեղեցականութեան համար պայծառ ջահ մը, հեղինակին կրօնասիրութեան, վսեմ ոճոյն և ամբողջ պարունակութեան կողմանէ: Գրած է նա ի մէջ այլոց երկու համառօտ այլ հոգեյոյզ տետրակներ, իրենց անունով ծանօթ: Գրեց «Դրախտի ընտանիք». և «Սիրաք Սամուէլ». ընտանեկան, տնտեսական և բարոյական պարունակութեամբ, սքանչելի պարզութեամբ, ախորժելի եղանակաւ հասկանալի և օգտակար ամէն կարգի անձանց: Գրեց «Ժամանակ և խորհուրդք իւր» տետրակն, և վերստին տպագրեց «Հրաւիրակն Արարատեան»ն: Այս մատեանները ինչպէս և յետոյ սրտառուչ «Վանգոյժ» և «Հայգոյժ» գրքոյկները թարմ թարմ ձեռքէ ձեռք անցան, և այսօր հացի պէս սնունդ կը ընծայեն բազմաց, մանաւանդ գաւառի հայոց: Այսպէս ամէն տեղ և ամենուն մերձ Ս. Հայրիկն, զոր կը ճանչնայ ժողովուրդն, զոր կը լսէ և կը սիրէ:

Եւրոպայի ուղևորութիւնը յայտնի է ամենուն: վերջապէս

1879ին կը վերադառնար Ս. Հայրիկն ի Վասպուրականն ի Վարագ, ուր կը առաջնորդէր զինքն Նախախնամութիւնն։ Իրմէն քիչ ետքը սովն կը սկսէր յափել այդ երկիրը, և երկիրն ի ձայն Ս. Հայրիկին օգնութիւն կը գոչէր։ Աղէտ մի չկայ որ հաւասարի սովու աղէտից. այլ սակայն Աստուած անգամ զմայլեցաւ տեսնալով համայն ազգին մէջ օգնելու և փրկելու առաքինութիւնը, ի ծագաց Հնդկաստանի մինչև ի ծագս Ովկիանոսի և Հիւսիսի շարժեցան Հայոց սրտերն և ձեռներն։ Կ. Պոլսոյ կեդրոնն և իր Պատրիարքարանն ունեցան մի ընտիր վստահելի Յանձնախումբ և Ռուսահայք մեծ գործակցութիւն։ Քաղցեալն ու մերկն Ս. Հայրիկին կը դիմէին. Նա ազգին գթութեան ներկայացուցիչ և մատակարար եղաւ. ոչ միայն հացն ու հագուստը կը բաժնէր խղճալեաց, այլ նոցա տառապանքն եւս իրեն բաժին կ՚ը՛ գունէր, կուլար, կը ողոքէր, կը յուսադրէր. բան մը՝ որ հացի չափ տեղ կը բռնէ թշուառաց համար, և գթութիւնը կը ոճեցնէ ողորմածասիրաց համար։

Ս. Հայրիկի մէկ ջանքն եղաւ Վարագայ մէջ երկրագործութեան գիշերօթիկ վարժարան բանալ, և բացաւ, որ շարունակեց իբր երկու և կէս տարի, որոյ ծախքը հոգացուած է Սով. Կեդր. Յանձնաժողովէն և Տփղիսի մասնաւոր նպաստներէ. բայց երեք տարի յառաջ դադարեցաւ այդ դպրոցն ի Վարագ, այլ կ՚ուզէր շարունակել զայն ի Սալախանէ գիւղ, Հէքարի գաւառը, ուր առատ է ջուր, և զանազան օգուտներ կը տեսնուին։ Վարագայ մէջ հին ձեռագիր մատենից թանգարան մի ևս հաստատեց հինգ տարի յառաջ, ուր խնամքով դասաւորած է հազարէն աւելի գիրք։

Ահաւասիկ Խրիմեան Սրբազանի կենաց և ծառայութեանց համառօտ պատկերը, նորա զանազան կողմերը գծելով։ Անշուշտ պակաս կը մնան տակաւին մանրամասնութիւնք. Նա կ՚ապրի դեռ, և կը ապրի գործելով։ Նորա կեանք և գործք կը շարունակուին ուրեմն եռանդով և արդիւնաբերութեամբ. փոյթ չունի նա թէ Պատրիարք է կամ Վանահայր մը, մայրաքաղաքի պերճանաց մէջ թէ գաւառաց փոշիներուն հետ, նա ամէն տեղ Խրիմեան վարժապետն է, Խրիմեան վարդապետն է, Խրիմեան Հայրիկն է, լուսաւորող, քարոզող և յանձանձող ժողովրդեան։ Նա արդէն մտած է կենաց 68 երրորդ տարին. բայց երբէք ծեր չէ. հոգւով զօրաւոր, մարմնով քաջառողջ, սրտով գթած, մտքով խոհուն, լեզւով քաղցրախօս, ի պէտս սակաւապէտ, համբերատար, Եկեղեցասէր, Ազգին վրայ յուսալից, ժամանակին պահանջից մտաւորապէս ծանօթ։ Խրիմեան Սրբազան պաշտօնի ետևէն վազած չէ երբէք,

3690

բայց երբ պաշտօնը զինքն կոչած է, մերժած չէ իբրև իւր ուխտին պարտականութիւնը։

Այս կենսագրութեան մասին յիշում է «Արարատ» պաշտօնական հանդէսի մէջ, նորա Պատուարժան Խմբագիրն թէ «ՀԱՅՐԻԿԻ ՄԻՒՍ ԲԱԶՄԱԹԻՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՄԷՋ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ Է «ՄԱ» ԻՐ ԼԻՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՃՇԴՈՒԹԵԱՄԲ»։

ՅԱՒԵԼՈՒԱԾ ՔԱՂՆԱԼՔ ՅԱԶԳԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՑ

Մինչդեռ Խրիմեան Սրբազանն զբաղուած էր վերոյիշեալ ազգաօգուտ ձեռնարկութիւններով՝ յանկարծ Պոլիս կոչուեցաւ ուր բաւական ժամանակ մնաց, այլ վերջին ծանօթ դէպքերէն յետոյ ստիպուեցաւ ուխտի երթալ Երուսաղէմ, Սուլթանէն շնորհուելով իւր ճանապարհածախք։ Սրբազան Հայրիկն կմնայր Ս. Քաղաքումն Հայոց Ս. Յակովբայ վանքում, և իւր տաժանելի գործունէութիւններից յետ, աստ պահ մի հանգիստ առնելով՝ կզբաղէր գրականութեամբ, և իւր անցեալ կենաց և գործոց վերայ կխորհէր։ Այս ժամանակում, յանկարծ փոխեցաւ առ Աստուած Տ. Տ. Մակար Ամենայն Հայոց երջանկայիշատակ Կաթուղիկոսն, ի 16 Ապրիլ 1891. ի խոր տխրութիւն Ազգիս։

Ս. Էջմիածնի Սրբազան Սինօդն փութացաւ Վեհափառ Հայրապետի մահուան տխրալի լուրն հաղորդել Մայր Աթոռոյ համօրէն վիճակացն Ռուսաստանի, Տաճկաստանի, Պարսկաստանի՝ և Հնդկաստանի, հրաւիրելով նորանց առաքել ի Ս. Էջմիածին իւրեանց Եկեղեցական ու Աշխարհական Պատգամաւորներն ըստ նախնի սահմանեալ սովորական կանոնաց, վասն ընտրութեան Նոր Կաթուղիկոսի, որոշելով ընտրութեան օրն, յ3. Մայիսի 1892։

Որոշուած ժամանակի համեմատ, ամէն Վիճակներից ընտրուած Եկեղեցական և Աշխարհական Պատգամաւորներն ժողովեցան ի Մայր Աթոռն Ս. Էջմիածնի, և Մայր Աթոռոյ Սրբազումար Միաբանութիւնն, և ամենայն Վիճակաց Պատգամաւորքն՝ տալով ի ժամանակին իւրեանց Քուէքը իւրեանց ընտրելեաց համար հաստատուած կանոնաց համաձայն, Աստուածային սուրբ տնօրէնութեամբն և ընդհանուր Ազգիս խորին բաղձանաց համեմատ՝ Քուէից առաւելութեամբ Սրբազան Խրիմեան Հայրիկն ընտրուեցաւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց

(Այս Բարեբաղդ ընտրութեան աւետնաց լուրն փութացաւ հեռագրել Ս. Էջմիածնից առ մեր Ամենափրկչեան Ս. Աթոռոյս Բարեխնամ Առաջնորդ Ամեն. Տ. ԵՍԱՅԻ Սրբազան Եպիսկոպոսն՝ Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայոց Աշխարհական արժանաւոր պատգամաւոր Կաթուղիկոսական ընտրութեան Մեծ. Պարոն Համբարձում Առաքելեանն 'ի ցնծութիւն Նոյն վիճակաց Ազգայնոց)։

ԳՐԱԴԱՐԱՆ

Ազգիս Նորընտիր Կաթուղիկոսի ընտրութիւնն իսկոյն պաշտօնապէս ներկայացուեցաւ Նորին Ռուսաց Կայսերական Մեծութեան, հաստատելոյ և վաւերացման համար, Բարձրագոյն Կանոնագրութեան համեմատ:

Մինչդեռ Ազգն անհամոեր սպասում էր ակնկալուած ժամանակում լսել Նորին Կայսերական Մեծութեան՝ Վեհափառ Կաթուղիկոսի Ընտրութեան վաւերացման ուրախարար լուրն. երկար ժամանակներ անցան, շատ առաւել քան սովորականն, առանց լսելոյ այն ակնկալեալ բերկրաբիթ լուրն ուստի ընդհանուր Ազգն խիստ տարակուսանաց և տխրութեան մէջ էր մնում չիմանալով այդ երկար լռութեան պատճառն: Շատ ժամանակներից յետոյ մեծ ուրախութիւնով լսուեցաւ որ ՆՈՐԻՆ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՆՆ և Օսմանցւոց ՍՈՒԼԹԱՆՆ իւրեանց Հիւպատոսների միջոցաւ պաշտօնապէս յայտնած են մեր Տ. Տ. ՄԿՐՏԻՉ (Խրիմեան Հայրիկ) ՆՈՐԸՆՏԻՐ ՎԵՀ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ, որ այսուհետ դադարած է Օսմանեան հպատակութիւնից, և ազատ է ուղևորել Ս. Երուսաղէմից ի Ս. Էջմիածին ի Պաշտօնավայր և ի Ս. Գահ Իւր:

ՀԱՆԴԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ 'Ի ՆՈՐ ՋՈՒՂԱ ՆՈՐԸՆՏԻՐ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՌԹԻՒ:

Տակաւին վ'րն յիշուած ուրախարիթ դէպքերից եւ լրերից անծանօթ՝ ամէն երկրի Հայեր՝ որպէս եւ Պարսկաստանի եւ Հնդոստանի Ազգայինքն դեռ մեծ մտատանջութեան եւ երկար ակնկալութեան մէջ մնացած Վեհ. Կա՞ուղի՞կոսի մասին, սոա, Աստուածային քաղցր այցելութեամբ հասաւ մեծի ցնծութեան օրն, լուսացաւ Ցունիս 14ի երջանիկ առաւօտն, եւ ինչպէս Մ. Աթոռոյ ամէն վիճակներն՝ նոյնպէս եւ 'ի Նոր Ջուղա հասաւ հեռագիրն Պաշտօնական եւ աւետաբեր հեռագիրն Ս. Էջմիածնի Կաթուղիկոսական Տեղապահ Ամենա. Սրբազան ԵՐԵՄԻԱ Եպիսկոպոսից առ մեր Ամենափրկչեան Սուրբ Աթոռոյս Բարեխնամ Առաջնորդ Ամենա. Տ. ԵՍԱՅԻ Ս. Եպիսկոպոսն. «ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ Է, ՀԱՂՈՐԴԵԼ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ՅԻՇԱՏԱԿԵԼ ՊԱՏԱՐԱԳՈՒՄ»:

Այս ուրախարիթ եւ աւետաւոր Հեռագիրն ստանալուց յետ, աննկարագրելի էր մեր Սրբազան Առաջնորդի ուրախութիւնն, նորա Հայրական դէմքն փայլում էր խիստ հրճուանօք եւ կրկին եւ կրկին փառք եւ գոհութիւն կմատուցանէր Աստուծոյ՝ 'ի խորոյ սրտէ եւ արտասուախառն աչօք, որ անհուն գթութեամբն Իւրով այց եկ անտերունչ Ազգիս, փարատէց ամէնուս սրտի մեծ տխրութիւնն, շնորհելով մեր Առաքելական Քաջափառ Ս. Գահին արժանաւոր եւ ընտիր Դահակալ եւ Տէր: Մեծ եւ ոտնելի է օրս այս ասէր՝ վասն ընդհանուր Ազգիս, եւ գրեթէ նման Փրկչի լուսափայլ Սուրբ Յարութեան աչուր՝ Հոգեւոր ցնծութեան արժանի, եւ անմիջապէս հրամայէց Սրբազան Հայրն հարկանել Սուրբ Վանաց՝ եւ տեղւոյս ամէն Քաղէրի Ս. Եկեղեցեաց Զանգակնէրն, եւ փութաց Մայր Աթոռի Սրբազան Տեղապահից ստացեալ յիշեալ աւետաբեր հեռագիրն հաղորդել Ս. Աթոռոյս Պարսկաստանի

եւ Հնդկաստանի ամէն վիճակաց՝ հեռագիրներով, պատուիրելով որ յետ այսու Ս. Պատարագաց եւ Ժամերգութեանց սովորական տեղարէնքում յիշեն Նորընտիր Տ. Տ. Մկրտիչ Վեհափառ Հայրապետի անունն:

Ժողովուրդք լսելով Եկեղեցեաց Զանգակնէրի աւետեանց ծայնէրն, սկսան հետզհետէ խուռն բազմութեամբ եւ հրճուախառն բերկրութեամբ աւետելով միմեանց՝ ամապարանոք փութալ հասանել Ս. Աթոռն, 'ի սպաս Սրբազան Առաջնորդին ի շնորհաւորութիւն, աւետաբեր լրոյն: Նորին Բ. Սրբազնութիւնն Հայրական մեծ ուրախութեամբ ընդունելով զժողովուրդն յայտնէց նոցա բերկրութեամբ սրտի. Ս. Էջմիածնի Մայր Աթոռոյ Տեղապահից ստացած Պաշտօնական աւետաբեր Հեռագիրն, եւ 'ի լուր նոցա կարդաց նոյն Հեռագիր, եւ շնորհաւորէց ամենեցունց Վեհափառ Հայրապետի հաստատուիլն իւր Առաքելական Բարձր Պաշտօնի եւ Ս. Գահի վերայ: Ազգու եւ պատշաճաւոր Բանախօսութեամբ, եւ հոգեւոր ուրախութեամբ դգածուած սրտով, Սրբազան Հայրն Բացատրութիւր մեր Մայր Աթոռոյ Առաքելական Ս. Գահի եւ Հայրապետութեան մեծ նշանակութիւնք վասն ընհանուր Ազգիս. եւ յիշուցիր թէ որչափ խոր տխրութիւն էր վասն մեր ամենեցունց՝ երբ այսչափ եր՛ար ժամանակ մեր Հայրապետական Ս. Գահն թափուր եւ սեւասքողած էր մնացած եւ Ազգն առանց ընդհանուր Գլխոյ, մինչեւ Բարերարն Աստուած Իւր անչափ գթութեամբն Բարեհաճեցաւ շնորհել մեզ Տէր եւ արժանընտիր Հայրապետ, որով փարատէց ամենուս սրտից տխրութիւնն: Մեր համարէն սիրելի Ազգի համար մեծ ցնծութեան եւ ուրախութեան Օր է այս՝ որ պարգեւեաց մեզ Աստուած իւր բաւոր ողորմութեամբ, ուրեմն մեծարան ամենեքեան 'ի խորոց սրտէ փառք եւ գոհութիւն պարտիմք մատուցանել Ամենաբարերարին Աստուծոյ՝ Իւր անչափ գթութեան եւ շնորհաց համար. եւ աղաչել զՆա զի տաճնայցէ զՆորընտիր Հայրապետն մեր անսասան եւ փառաւոր իւր Հայրապետական Ս. Գահի վերայ՝ յնդ երկար ամս առ ի պահպանել եւ ի կառավարել զՀօտ իւր արժանապէս: Քանզի՝ Սրբազան Հայրն օրհնելով ժողովրդց, որք մի առ մի համբոյր նուիրէին Ս. Աջոյն արտասուելոյն խնդութեամբ:

Հետեւեալ աւուր առաւօտն Ս. Պատարագ մատուցանէ Ս. Վանաց Եկեղեցւոյն, Նորընտիր Վեհափառ Հայրապետի անգին կենաց եւ բարօրութեան համար. Ուր ամենայն Հաւատարմանի. ժողովրդոց մեծ բազմութիւն եւ Ազգ. Երկրեր Ուսումնարանաց Աշակերտք. Նիրկոյ Լին՝ ջերմեռանդութեամբ աղօթակից լինելոյ վասն Նորին Վեհափառութեան: Հոգեւոր մեծ ուրախութիւն լցաց ամէն որ 'ի լսել առաջին անգամ Նորընտիր Հայրապետն տասն ակն անուն յիշուելն Ս. Պատարագի մէջ: Ս. Պատարագի վերջն Հանդիսաւոր Հոգեհանգիստ կատարուեց՝ Երջանկայիշատակ Տ. Տ. Մակար հանգուցեալ Կաթուղիկոսի համար եր պատարագ զգացմամբ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի:

Եկեղեցին արտասուելոյց յետ. Հասարակութիւնն ներկայացաւ Սրբազան Առաջնորդի ոտքն, եւ ամէնքն ուրախ զգացմամբ մատուցին Նորան իւրեանց Որդիական մեծ սրտանցն հաճրդիր Ս. Աջոյն: Նորին Բ. Սրբազնութիւնն ուրախութեամբ ստանալով նոցա հաճակրական եւ յարգանաց ողջոյնն՝ սկսաւ խօսել առ նոսա զարժանն եւ զհարկաւորն օրուան հանդիսի եւ մեծ ուրախութեան առթիւ, ջերմ բարեմաղթութիւններ առնելով Նորընտիր Վեհ. Կա՞ուղիկոսի համար, եւ ամէնին շնորհաւորելով ընդհանուր Ազգիս յԱստուծոյ շնորհուած առիթն հոգեւոր մեծ ուրախութեան: Ազգ Ուսումնարանաց Աշակերտներն, սկսան բարբառեալն Երգել Նորին Վեհափառութեան անուան նուիրած՝ եւ այլ ընտիր երգեր [illegible] Ս. Վանաց Դիւանատունքն հրաւիրուեցան 'ի վայելչ[illegible] Նորին Բ. [illegible]ն զարժակնէր առաջարկելով Նորընտիր Վեհ. Կաթուղիկոսի [illegible] Աստուծոյ յարատեւ հաստատութեան՝ եւ Ազգիս երջանկութեան

եւ մխիթարութեան համար չէր բարեմաղթութիւններով եւ երգեցողութեամբ վայելեցին ա-մէնքն: Հանդէսն աւարտելուց յետոյ, ճանդխաւորներն նուիրելով իւրեանց մեծարժանայ համբոյրներն Սրբազան Հօր Ս. Աջոյն եւ օրհնութեան նորանից՝ արձակուեցան, կրելով իւր-եանց սրտերում, այդ օրուան քաղցր եւ երջանիկ յիշատակն:

Այժմ ամենայն որ մեծ փափագանօք եւ անհամբեր սպասումէ Վեհ. Հայրա-պետի 'ի Մայր Աթոռն ողջամբ ժամանելոյ եւ Ս. Օծութեան բերկրաւիթ լուրն լսելու: Նորին Վեհափառութիւնն, նոր լրերի համեմատ Ս. Երուսաղէմից ճանապարհորդումէ Եւ-րոպայի ճանապարհով 'ի Ս. Էջմիածին, եւ Եւրոպաբնակ Սիրելի Ազգայինք արդէն մեծա-մեծ պատրաստութիւններ են տեսնում փառաւոր եւ Հայրապետավայել ընդունելութիւններ-անելու Նորին Վեհափառութեան: Տացէ Աստուած, որ՝ ի մօտ աւուրս Նորա 'ի Մայր Ա-թոռն ողջութեամբ եւ ապահով հասանելոյ քաղցր եւ բերկրալի լուրն լսելոյ մեծ ուրախու-թիւն եւ բարեբաղդութիւնն ունենամք. եւ արժանի արասց Ազգիս այնելոյ Վեհ. Հայրա-պետի այն վսեմ եւ բարի նպատակներն որ տածումէ իւր սրտում, վասն Ս. Եկեղեցւոյ մեր, եւ Ազգիս:

Ի ՆՈՐ--ՋՈՒՂԱ — ՀԱՅՐԱՊԵՏ ՏԷՐ ՊՍԱԿ Հ. ՅԱԿՈՎԲՋԱՆԵԱՆՑ.

Ի 14 Յունիս 1893

ԱԻՕ ՑՈՒՀԱՆՆԻՍԵԱՆ
1960
ՆՈՐ - ՋՈՒՂԱ

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL032034

Վաճառւում է յօգուտ Նոր Ջուղայի Ուսումնարանաց: